524 էջում եղած հիշատակարանի մեջ նորից է խոսվում հնդկահայ դրամատու Ստեփանոսի մասին (Նիկողոսեան Աղբար կոչեցելոյ Զօրաբեանց)։

Հնդկաստանի տպագրություններ

24. Հովսեփ Աղուրյանց *ՕՐԻՆԱԿ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ԾԱՆՈՒՑՄԱՆ։ Մադրաս, տպ. Հարություն Շմավոնյանի, 1791, 40 էջ, վերջաբարդեր։ Մատենադարան, № 356։*

Անվանաթերթն սկսվում է՝ Օրինակ հանդիսաւոր ծանուցման եւ ողբոյ վասն վաղեանի..., *ապա՝* Տպագրեցաւ համեմատ ի մայր հեղինակէ Մադրասումս, *վերջում՝* Յամի Տեառն Փրկչին մերոյ 1791 թիւ բուականութեան Հայոց 1240 Ի տպարանի Տէր Յարութիւն Շմաւոնի Շիրազեցւոյ։

Այս գրքի երկրորդ տպագրությունը, որ կատարվել է նույն Շմավոնյանի տպարանում 1792-ին, հիշվում է մեր մատենագետների կողմից (Զարբհանալյան, «Հայկական մատենագիտություն», էջ 726, Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն», սյունակ 250, Թեոդիկ՝ «Տիպ ու տառ», էջ 173, Լեոնյան, նշվ. աշխատութ., էջ 158), մինչդեռ այժմ նկարագրված այս առաջին հրատարակությունը մատենագիտական աշխատություններում չի հիշատակվում։

25. ԷՖԻՄԷՐՏԷ։ Կալկաթա, տպ. Հովսեփ Ստեփանոսյանի, 1798, ԺԸ, 488 (=508) զարդափակ էջ, գեղեցիկ զարդեր։ Մատենադարան, № 1679, Հանրային գրադարան, № 4038։

Անվանաթերթն սկսվում է. Դրգուկ, որ կոչի Էֆիմէրտէ։ Յորում պարունակի Նախ՝ Շրջան մշտնջենաւոր գնկուցմանց, *վերջում՝* Յամի Կենարարին մերոյ... 1798։ Ի Կալկաթա։ Ի Տպարանի Տեր Յովսեփայ, Ստեփանոսեան։

Անվանաթերթի դարձերեսին ոտանավոր՝ «Խրատական բան առ մանկունս», էջ Ա—ԺԸ Հովսեփ Ստեփանոսյանի նախաբանը։ 488-րդ էջի ներքևում կա փոքրիկ հիշատակարան։

Հովսեփ Ստեփանոսյանը Կալկաթայում առաջին հայկական տպարանի հիմնողն է և ժամանակագրական կարգով երրորդ հայ տպագրիչը Հնդկաստանում։ Նրա տպագրած գրքերից մինչև այժմ հայ մատենագիտությանը ծանոթ են եղել երկուսը՝ Աբրահամ Կրետացու Պատմությունը (1796) և Հովհաննես Ջուղայեցու (Մրբուզ) Վիճաբանության գիրքը (1797), այս «Էֆիմէրտէն» հետաքրքիր նորություն է այդ տպարանի համար, քանի որ տպագրությամբ ավելի հաջող է, քան նախորդները, որով և հարկ է զգացվում փոքր-ինչ մեղմել Ստեփանոսյանի տպագրություններին տրված «շատ խղճուկ»[16] որակումը։

Հայատառ թուրքերեն գրքեր

26. ԿՐԹՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ։ Կ. Պոլիս (՝), 1742։ ՃՂ (2 չհ.)=192 զարդափակ էջ, անվանաթերթի դարձերեսին խաչելության պատկեր։ Մատենադարան, № 881, 882, Հանրային գրադարան, № 98։

Անվանաթերթն սկսվում է՝ Պու գիրք օլտուրմի քրիստոնէական Հաւատ։ Բմբզա Իգթիզալը Կերէք օլան Պիր զաշ էօյրէնիլեճէքլեր...։ *ՃՀԶ (176) էջում՝*

---

16 Գ. Լեոնյան, նշվ. աշխատութ., էջ 159։